



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄ**

**ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ Արա Զոհրաբյանի, անդամներ Մանե Կարապետյանի, Հունան Տեր-Վարդանյանի և Քրիստինա Սարգսյանի,

հաշվի առնելով որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 17.09.2014թ. թիվ 26/9-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի 7.4 կետի պահանջներով,

միաձայն՝

ՈՐՈՇԵՑ՝

- նոր խմբագրությամբ հաստատել Որակավորման քննության գրավոր աշխատանքների ստուգման և գնահատման չափանիշները՝ համաձայն հավելվածի:

Նախագահ՝

Արա Զոհրաբյան

Որոշում N 02/02-Լ

ք. Երևան

15 մարտի 2016թ.

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
15.03.2016թ. թիվ 02/02-Լ որոշման

Հանձնաժողովի նախագահի
Արա Զոհրաբյան

**ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ
ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)**

1. Քաղաքացիական մոդուլի՝ հայցադիմումի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))

- Հայցադիմումին ներկայացվող ձևական պահանջներ՝ ընդհանուր միավորը՝ մինչև 2 (երկու).

- Նկարագրական մաս (փաստերի ընտրություն)՝ ընդհանուր միավորը՝ մինչև 5 (հինգ), որից յուրաքանչյուր ավել ընտրած և վեճի համար էական նշանակություն չունեցող փաստի համար նվազեցվում է 0,5 միավոր (2 միավորից ոչ ավել), յուրաքանչյուր չընտրած և վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի համար նվազեցվում է 1 միավոր (3 միավորից ոչ ավել)։

- Պատճառաբանական մաս՝ ընդհանուր միավորը՝ մինչև 9 (ինը), որից՝ ա) յուրաքանչյուր ավելորդ (վեճի լուծման հետ ուղղակիորեն կապ չունեցող) վկայակոչված իրավական նորմի և/կամ պատճառաբանության համար նվազեցվում է 0,5 միավոր (1 միավորից ոչ ավել), բ) սխալ վկայակոչված (գործի փաստերի նկատմամբ ոչ կիրառելի) իրավական նորմի և/կամ պատճառաբանության համար նվազեցվում է 1 միավոր (2 միավորից ոչ ավել), իսկ գ) չվկայակոչված (անհրաժեշտ և կիրառելի) իրավական նորմի (նորմերի) կամ ճիշտ վկայակոչված նորմի (նորմերի) թերի կամ սխալ պատճառաբանության համար նվազեցվում է մինչև 6 (վեց) միավոր.

- Եզրափակիչ մաս՝ ընդհանուր միավորը՝ մինչև 4 (չորս)։

2. Քաղաքացիական մոդուլի՝ վճռի դեմ վերաքննիչ բողոքի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))

- Վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական պահանջներ՝ ընդհանուր միավորը մինչև 2 (երկու).

- Վերաքննիչ բողոքի հիմք և հիմնավորումներ, այդ թվում՝ դատական սխալի վերհանում, նյութական և/կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև հիմնավորվածություն և պատճառաբանություն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի վերլուծություն և համադրում գործի փաստերի հետ, ինչպես նաև գործի ելքի վրա

դրանց ազդեցության հիմնավորում և տրամաբանական կապ ներկայացված պահանջի հետ՝ ընդհանուր միավորը մինչև 16 (**տասնվեց**) (սույն չափանիշով գնահատման համար հաշվի է առնվելու նաև ոչ էական նորմերի և/կամ փաստերի վկայակոչումը)։

- **Վերաքննիչ բողոքի պահանջ (խնդրամաս)**՝ ընդհանուր միավորը մինչև 2 (երկու)։

3. Քրեական մոդուլի՝ միջանկյալ դատական ակտի կամ դատավճռի դեմ ներկայացվող վերաքննիչ բողոքի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))

- **Վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական պահանջներ**՝ ընդհանուր միավորը մինչև 2 (երկու)։

- **Վերաքննիչ բողոքի հիմք և հիմնավորումներ**, այդ թվում՝ դատական սխալի վերհանում, նյութական և/կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև հիմնավորվածություն և պատճառաբանություն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի վերլուծություն և համադրում գործի փաստերի հետ, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության հիմնավորում և տրամաբանական կապ ներկայացված պահանջի հետ՝ ընդհանուր միավորը մինչև 16 (**տասնվեց**) (սույն չափանիշով գնահատման համար հաշվի է առնվելու նաև ոչ էական նորմերի և/կամ փաստերի վկայակոչումը)։

- **Վերաքննիչ բողոքի պահանջ (խնդրամաս)**՝ ընդհանուր միավորը մինչև 2 (երկու)։

4. Դեռնթուլոգիայի մոդուլի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))

Ներկայացվում է ընդհանուր 4 (չորս) խնդիր, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է մինչև 5 (**հինգ**) **միավոր**, որից 1 (մեկ) միավորը տրվում է ճիշտ պատասխանին (այո կամ ոչ), իսկ մինչև 4 (չորս) միավորը՝ վերլուծությանը (հիմնավորումներին)։